Տ. ՆԵՐՍԵՍ ՆՈՐԱՕԾ ՔԱՀԱՆԱ ՂԱԼԱՅԱՆԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ ՎԱՆԱՁՈՐԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Դեկտեմբերի 28-ին Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցում նախագահությամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի տեղի ունեցավ նորընծա քահանա Տեր Ներսեսի ուխտի պատարագը: Թեմական առաջնորդը հավատացյալներին ներկայացրեց Տեր Ներսես քահանա Ղալայանին՝ որպես Ս. Աստվածածին եկեղեցու նորանշանակ հոգևոր հովիվ, շնորհավորեց վանաձորցիներին այդ առիթով՝ ի մասնավորի ասելով. «Սիրելի՛ հավատավոր հայորդիներ, բոլորիս համար ուրախալի առիթ է այսօր՝ մասնակից և հաղորդակից լինելու Տ. Ներսես քահանայի ուխտի Պատարագին: Տեր Ներսեսը ձեզ բոլորիդ հայտնի է եղել որպես Արայիկ սարկավագ, ով տաս տարի շարունակ ձեր աչքի առջև իր ծառայությունն է բերել այս գողտրիկ եկեղեցում, և այսօր ահա մեր Տիրախնամ թեմում իր անդրանիկ՝ ուխտի պատարագն է մատուցում որպես քահանա: Մեր սրբազան ավանդության համաձայն՝ ժողովուրդն իր միջից բարեպաշտ ընտանիքի զավակ էր ընտրում և հոգևոր ուսման ուղարկում, որպեսզի վերադառնա իբրև օծյալ քահանա ու ծառայի իր համայնքին: Այսօր ահա ականատեսն ենք լինում այդ իրողության: Ուստի շնորհավորում եմ բոլորիդ այս գեղեցիկ առիթով և նորընծա քահանա հորը մաղթում աստվածահաճո ծառայություն՝ հավատարիմ իր կոչմանն ու ուխտին»:

Տ. Ներսես քահանա Ղալայանը ծնվել է Վանաձորում 1970 թ.: Ավարտել է Վանաձորի թիվ 19 միջն. դպրոցը, ապա 1987-1992 թթ. սովորել Ս. Թևոսյանի անվան պոլիտեխնիկական տեխնիկումում: Սովորելու տարիներին ծառայել է խորհրդային բանակում: 2002-2004 թթ. սովորել է Քահանայից պատրաստման լսարանում, որից հետո ուսումը շարունակել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում: Հոգևոր կրթությունն ամբողջացնելուց հետո Վեհափառ հայրապետի կողմից որպես սարկավագ նշանակվել է Գուգարաց թեմում: Սույն թվականի դեկտեմբերի 9-ին ձեռամբ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի կարգադրությամբ նշանակվել է Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ:

Բարի ծառայություն ենք մաղթում նորընծա քահանային՝ ի բարօրություն հավատավոր ժողովրդի և ի պայծառություն մեր Մայր Եկեղեցու:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ